

պատողները, հեռանելով նորա երեսակական մարշրուտին, արդէն համաձայնում են նորա հետ և պատմում որ ֆրանսիական զօրքը շուտով լաղթական մուտք կը գործէ Լեռլին:

Պարիզը պաշարած է և թնդանօթների որոտները գոռոտում են նորա քանձնելը, իսկ զնդապետը կարծում է թէ ալդ ուրախութեան արտապատութիւն է Բաղէնի տարած լաղթութեան համար Բերլինի մօտ:

Եւ ծեր զնդապետը արդէն երևակաւում է որ Մակ—Մահօնը իւր լաղթական զօրքով ծաղիկների մէջ կորած անցնում է Պարիզի զարդարած փողոցներով, և նորա կողքին

իւր սպալ որդին, իսկ ինքը պատշկամրի վերալ, իւր համազգեստը հաղին, շնորհաւորում է գզակներով ծակոտած և վառօղից սևացած հալրենի զրօշակները... Նա ուժ է ստանում, սպառազինած դուրս գալիս պատշկամբը, բալց ինչ... մեռելալին լռութիւն փողոցներում. ամեն տեղ երևում են պրուսական զրօշակներ. ահա հեռուից փալցեցին պրուսական սաղաւարտները, լսեց Շուքերտի լաղթական մարշը:

—'Ի զէն, 'ի զէն... պրուսացիները"... գոչեց ծեր հալրենասէրը, ուժերը թուլացան և վալը ընկաւ մեռած:
Լ. Ս.

„Объяснительный Словарь“ татарскихъ, грузинскихъ и армянскихъ словъ, вошедшихъ въ „Матеріалы для изученія экономич. быта Госуд. крестьянъ Закавказья. края. Составилъ С. П. Зелинский. Тифлисъ М. Д. Ротинянца, 1889 г.

Ինչպէս լալանի է ընթերցողին վալւածների նախարարութիւնը վերջին ժամանակներս ուզարկեց հետազօտողների մի խումբ նիւթեր ժողովելու արքունական գիւղացիների գրութիւնը բարւոքելու նպատակով: Այդ նիւթերի մէջ, որոնք ուսուցէն լեզուով տպագրւեցին վերջին հինգ տարւալ ընթացքում, հետազօտողները գործ են ածել տեղական բառեր, անուններ, ասածաքներ, որոնք օտար են ուսաց լեզուին: Պր. Ս. Ջելինսկին ժողովել է ալդ օտար բառերը և կալմել մի առանձին բառարան, որ մեզ համար շատ և շատ հետաքրքրական է: Բառարանը կալ-

մըւած է հմուտ ձեռքով և ընդարձակ բացատրութիւններով. իսկ մի քանի բառերի վերաբերմամբ նա տալիս է հեղինակի սեպհական ուսումնասիրութեան հետևանք, ալդպէս են համփա, մուշա, ոչխար (զօլուն) և ուրիշ բառերի բացատրութիւնները:

Շատ ափսոսալի է, որ բառարանը կազմւած է մի սահմանափակ չրջանի բառերի համար, միայն ալն բառերի, որոնք մուտք են գործել վերև չիշած նիւթերի մէջ: Բառերն երեք տեսակ են, թուրքերէն, վրացերէն և հալերէն. ամենամեծ տեղը ըռնում են թուրքերէն բառերը, որ

աւելի մեծ թւով են մտել հետազոտութիւնների մէջ, Հայերէն բառերի թիւը աւելի մեծ կարող էր լինել, եթէ իրանք հայերը հազորդած լինէին հետազոտողներին ալգ բառերը, Նկատւած է, որ հայերը միայն հայերին են հայերէն բառ ասում, իսկ օտարազգիներին՝ թուրքերին, ռուսերին, վրացիներին ասում են թուրքերէն բառեր թարգմանելով հայերէնից:

Զելինսկու բառարանի մէջ գրտնում ենք երեք հարիւրից աւելի հայկական տեղական բառեր, որոնցից մի մասը նորութիւն է մեր գրականութեան համար: Նա մանաւանդ հարուստ են գիւղատնտեսութեան վերաբերեալ բառերը: Մեր թարգմանիչները, կամ մասնագէտ գրողները մեծ նեղութիւն են քաշում՝ երբ ցանկանում են մասնագիտական բառեր պործածել: Զելինսկու բառարանը, իբրև փորձ, ապացուց է, որ հալ ժողովուրդը ամբարել է բազմաթիւ բառեր, որոնցից պէտք է օգուտ քաղել, հարստացնելով մեր գրական լեզուն: Մի հասարակ բառ, զորօրինակ հոնձից լստու մի կամ մի քանի տարւալ համար անմշակ թողած հողը կրում է ըստ Զելինսկու բառարանի հետեւեալ անունները՝ իմարաթ, վաստակ, կորամիտ, փոչ, կեալ, լօհրան, ցետ, խամհար, խոզնատեղ, չօփատեղ: Ի հարկէ այս բառերից մի քանիսը բոլորովին համանիչ չեն, ալ արտապալտում են հողի անմշակ գրութեան մի լատնի աստիճանը. բալց և անպէս հասկանալի է, թէ, մասնագէտի համար, որչափ մեծ նիւթ կալ մեր ժողովրդի բերանում, Հողի

զանազան լատնութիւնները որոշւում են ալտեսակ բառերով. մսահող, լուսահող. գութանը ունի իւր բոլոր մասերի համար անուններ և երկու տեսակ ակնեգութան և կոնգութան: Հետաքրքրական են ալս տեսակ բառեր՝ խնգակ (САВЯ), ցարիւր (ուժասպառ, թուլացած ցորեն), համփաղօր (ХУДЖАКЪ), գարնանի (գարնանացան) և ալլն:

Մի քանի բառեր, որոնք վշատակած են իբրև հայկական, վիճելի են, զորօրինակ գիւղեհանա (ցորենի տեսակ), գիւրու (ГОРОШЕКЪ) վեադակ (գոմշահորթ), մալեա (մակարդ), սիւնի (սկուտղ), քիլա (չափի տեսակ), արխալուղ:

Մի քանի բառերի նշանակութիւնը կարելի է աւելի լրացել. քան արել է Զելինսկին, զորօրինակ պիժ բառը գործ է ածում նոյնպէս մի վնասակար խոտի համար, որ լանալս գտնւում է լեռներում և լատնի է լաաինական CAREF անունով: Մարդգա բառը լատնի է Գողթանում գա փ անունով, սեռել (ГОХОВЕН) բառը երևանեան նահանգի մի քանի գիւղերում լատնի է մրիկ անունով, կեազ (ГЯВАНЪ) բառը Սրևանի գաւառում լանալս արտասանւում է կազ կամ գաղ, իսկ Գողթանում կրում է հոս կամ հոս անունը, ջեջը արտասանւում է նոյնպէս ճեճ և ճիճի, ջրալիւնի տեղ մի քանի տեղերում ասում են ջրարբի, դարմանոցի և գարնավարի տեղ դարմանանոց և գարնանավար, աքեչը Գողթանում ասում է ակիչ: Սխալ են գործածւած չամբալալի համար onobrychis և թանի համար СЫВОРОТКА բառերը:

թանը—*пахта* կամ *пахтань*-ն է, իսկ *сыворотка*-ն պանրաջուրն է:

Ձևլինսկու բառարանը այն տեսակ գրքերից մէկն է, որ արժանի է օրինակ լինելու և իբրև աշխատանք ջերմ կերպով խրախուսելու: Ցան-

կալի է, որ նորնատեսակ աւելի ընդարձակ բառարան կազմէր ժողովրդական հարուստ լեզուի բառերը ժողովելու համար:

Ա. Քլ.

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ

1) ՊԱԼԱՍԱՆԵԱՆ ՍՏԵՓԱՆՆՈՍ.—«Պատմութիւն Հայոց սկզբից մինչև մեր օրերը», Հրատարակութիւն «Թիֆլ. Ընկեր. հայերէն գրքերի հրատարակութեան», Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի, 1890, գինն է 1 ռ. 50 կ.

2) ՍԱՐԳՍԵԱՆՑ ԼԵՒՈՆ.—«Այց. Թիւրքաց Հայաստանին» (Հայ տուրիստի լիշողութիւններէից), արտատպած «Մուրճ» ամսագրից, Թիֆլիս, տպ. Ռօտինեանցի 1890, գինն է 60 կոպ.

3) TER-MIKELIAN.—Ein Hirtenbrief des armenischen Katholikos und Patriarchen Makar I. Sonder-Abdruck aus den Jahrbüchern für protestantische Theologie Verlag von C. A. Schwetschke und Sohn in Braunschweig.

4) ՀԱՆԳԷՍ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ, ԵՐՐՐԴ ԴԻՐՔ, հրատարակիչ Մկրտիչ Բարխուդարեանց, տպարան, Մկրտ. Բարխուդարեանցի, 1890 թ., գինն է 2 ռ..

5) Труды Имп. Кавк. Обществ. Сельск. хоз. Мартъ—Апрѣль Май. № 3—5.. Тип. 1890, тип. Михельсона.

6) ԿՈՒՍԻԿԵԱՆ Յ. Ս.—«Միւր ձանձնիւրը» (Թիֆլիսի բարբառով ոտանաւորով գրած) կօմեդիա երեք արարածով և երկու պատկերով: Հրատարակութիւն Ն. Ս. Կուսիկեանի, Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանցի, 1890, գինն է 1 ռ.: